ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը՝ Անահիտ Առաքելյան, բյուջետային գործընթացի համակարգման վարչության հանրային իշխանության առանձին մարմինների գծով բյուջետային ծրագրավորման բաժնի գլխավոր մասնագետ.

2. Գործուղման վայրը և ժամկետները՝ ք. Հաագա, Նիդերլանդների Թագավորություն, 2023թ. հունիսի 26-ից 30-ը.

3. Հրավիրող կողմը՝ Նիդերլանդների Թագավորության ֆինանսների նախարարության Ֆինանսների և էկոնոմիկայի ազգային ակադեմիա.

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

Մասնակցություն «Հանրային ֆինանսների կառավարում» թեմայով ամառային դասընթացին

5. Քննարկված թեմաները՝

1. Հարկաբյուջետային քաղաքականությունը Նիդերլանդներում,
2. Բյուջետային ենթակառուցվածքներ,
3. Բյուջեի վերահսկողությունը Բյուջետային տեսչության կողմից,
4. Ծախսերի վերանայումներ,
5. Հարկաբյուջետային տեղեկատվության և հետաքննության ծառայություն,
6. Պառլամենտի դերը,
7. Թվային բյուջե, բաց տվյալներ:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Ներկայացվել է շնորհանդես Հայաստանում պետական ծախսերի կառավարման բարեփոխումների և հիմնական մարտահրավերների վերաբերյալ:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Դասընթացի շրջանակներում որոշումներ ու պայմանավորվածություններ չեն ընդունվել, և փաստաթղթեր չեն ստորագրվել:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Նիդերլանդների հանրային ֆինանսների կառավարման համակարգը հանդիսանում է աշխարհում լավագույններից մեկը: Նիդերլանդների փորձը կարող է օրինակ ծառայել հարկաբյուջետային քաղաքականության, բյուջետային գործընթացի, հանրային ֆինանսների հաշվետվողականության և թափանցիկության բարելավման համար:

Գործուղվող՝

Բյուջետային գործընթացի համակարգման
վարչության հանրային իշխանության առանձին
մարմինների գծով բյուջետային ծրագրավորման
բաժնի գլխավոր մասնագետ՝ Անահիտ Առաքելյան

06.07.2023թ.